# Վիրավոր ծնծղուկը

Մայրս խնդրեց, որպեսզի ես փայտանոցից մի երկու ծղոն բերեմ վառարանի համար: Երբ փայտանոց մտա, մսուրքի մոտ, գետնին ընկած գտա մի փոքրիկ ծնծղուկ: Փայտի կտորները սենյակ բերեցի ու վերադարձա: Ծնծղուկը նույն դիրքով կուչ էր եկել: Նրան ձեռքս առա: Զգացի մարմնի թույլ թրթռոցը: «Երևի վիրավոր է, — անցավ մտքովս: — Ծառից ընկել է ու վիրավորել իրեն»:

Տուն բերեցի և տեղավորեցի վառարանի կողքին: Հացի փշրանքներ դրեցի դիմացը: Սկզբում անշարժ նստած էր: Հետո կամաց-կամաց ընտելացավ մեզ և զգուշորեն սկսեց կտցահարել: Օրեր շարունակ խնամում էի նրան: Օրերի հետո սկսեց առողջանալ և թռչկոտել սենյակի մի անկյունից մյուսը:

— Աղջս, բաց թող նրան: Արդեն լավ է զգում: Թող գնա ու միանա իր ընտանիքին, — ասաց մայրս:

Արևոտ օր էր: Ծնծղուկին իմ փոքրիկ բարեկամին, դուրս բերեցի այգի ու բաց